



ԼՐԱՏՈՒ

ՄԱՐՏ 2013



**«Շուկաներ
Մեղրիի համար»**



Հիմնական միջոցառումներ

Մույն թվականի մարտի 12-15 «Շուկաներ Մեղրիի համար» ծրագրի թիմը գտնվում էր Մեղրիում: Գործուղման հիմնական նպատակն էր քննարկել հետագա համագործակցության հնարավորությունները պոտենցիալ գործընկերների հետ, ինչպիսիք են «Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնը» և «Մեղրիի այգեգործների ասոցիացիան»: Թիմի անդամները հանդիպումներ ունեցան նաև ակտիվ ֆերմերների հետ: Թիմը մշակեց նաև 2013 թվականի ծրագրային աշխատանքների վերջնական պլանը: Մարտի 19-ին Երևանում կայացավ «Մեղրիի պահածոների գործարանի» և «Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի» ներկայացուցիչների հետ մեկ այլ գործնական հանդիպում:

Համագործակցության զարգացում

Համաձայն CARD հիմնադրամի և Հայաստանի փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման կենտրոնի (ՓՄՁ ԶԱԿ) միջև ստորագրված համաձայնագրի՝ պարոն Արմեն Սարգսյանը, ով ՓՄՁ ԶԱԿ նոր աշխատակիցն է և ներկայացուցիչը Մեղրիում, իրականացնելու է ծրագրեր՝ ուղղված մեկնարկող և գործող բիզնեսի զարգացմանը: Պրն. Սարգսյանը իր գործունեությունը ծավալելու է «Շուկաներ Մեղրիի համար» ծրագրի Մեղրիի գրասենյակում: Երկու կազմակերպությունների նպատակն է լինելու համատեղ ծրագրերի միջոցով նպաստել Մեղրիի տարածաշրջանի տնտեսական զարգացմանը: Արդեն իսկ մեկնարկել է «Շուկաներ Մեղրիի համար» ծրագրի, ՓՄՁ ԶԱԿ և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության համատեղ պիլոտային ծրագիրը չրագործության ոլորտում: Ծրագրի հիմնական նպատակն է զարգացնել Մեղրիի ֆերմերների գիտելիքներն ու հմտությունները, ինչը կնպաստի արտադրողականության բարձրացմանը և պոտենցիալ

գնորդների հետ կայուն կապերի հաստատմանը՝ ապահովելով բարձր եկամտաբերություն: Համաձայն ստորագրված հուշագրի՝ պետք է անցկացվեն ձեռնարկատիրական ունակությունների զարգացմանն ուղղված վերապատրաստման դասընթացներ, սեմինարներ և խորհրդատվություն: ՓՄՁ ԶԱԿ-ի ներկայացուցիչը նաև կաջակցի Մեղրիի տարածաշրջանում ներդրումներին վերաբերող ինֆորմացիայի տարածմանը և կտրամադրի վարկային երաշխիքներ՝ տարածաշրջանի ակտիվ ունիվերսալ վարկային կազմակերպությունների և բանկերի օգնությամբ:

Նախատեսված միջոցառումներ

«Շուկաներ Մեղրիի համար» ծրագրի թիմը նախատեսում է վաղահաս կեռասի և խաղողի մշակման պիլոտային ծրագրեր սկսել «Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի» և «Մեղրիի այգեգործների ասոցիացիայի» հետ: Ապրիլի 9-12 պարոն Մալոսսին, ով հրավիրվել է ՓՄՁ ԶԱԿ և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից, Երևանում կանցկացնի վերապատրաստման դասընթաց: Պարոն Մալոսսին Կենտրոնական Ասիայում աննդի և արտադրական ինժեներինգի մասնագետ է: Դասընթացի հիմնական թեմաներն են՝ HACCP, չորացման տեխնոլոգիաներ, միջազգային ստանդարտներ, փաթեթավորում և պիտակավորում: Պարոն Մալոսսին կայցելի նաև Մեղրի, որտեղ խորհրդատվություն կտրամադրի ակտիվ ֆերմերներին մշակման տարբերությունների վերաբերյալ: Ապրիլին նախատեսվում է նաև պարոն Գեվին Անդերսոնի այցը Հայաստան, ով հանդիսանում է «Շուկաներ աղքատների համար» մոդելի մասնագետ (SpringField Centre, ՄԲ):